Եթե խաչվառը բարձրացնեն, ուրեմն հաղթությունը իրենցն է, եթե հաղթությունը թշնամունն է, խաչվառը իջեցնում են: Եվ այս կռվի մեջ խաբեցին նրանց, քանզի ներսի դուռը ամրացրին, իսկ պողոտայի երկու դուռը վեր քաշեցին: Նույնպես նաև արտաքին դուռը վեր քաշեցին և թողին բաց, ապա խաչվառը խոնարհեցին: Հագարացիները (թուրքերը) տեսան և հավատացին, որ ճշմարիտ է և հնչեցրին ռազմի փողերը ու գոչեցին ալտրք դալայի, այսինքն՝ բերդը գրավեցինք: Եվ այսպես մտան երկու պարիսպների միջև, և փողոցը լցվեց ծայրից ծայր: Ապա լատինները (ֆռանկները) իջեցրին փողոցի երկու դռները, և մահմեդականների ավելի քան կեսը մնացին ներսում: Քրիստոնյաները բարձրացրին խաչվառը, հնչեցրին փողերը և կանչեցին՝ վիվո, վիվո, այսինքն՝ ուրախ եղեք, ուրախ եղեք:

Երբ օսմանցիք տեսան բարձրացված խաչը, սկսեցին փախչել, և ֆռանկները ընկան նրանց հետևից, հալածեցին, կոտորեցին, և իսպառ փախցրին մինչև իրենց Պուտան քաղաքը, իսկ նրանք, որ մնացին փողոցում, գերվեցին: Տասներկու փաշա իրենց բոլոր զորքերով գնացին, խառնվեցին ֆռանկների զորքերին և դարձան քրիստոնյա: Քիչ-քիչ տարան նաև իրենց ընտանիքները իրենց մոտ*: Ֆռանկները գրավեցին Պուտան** քաղաքը և թուրքերին հարկատու դարձրին: Գրավեցին նաև Բելգրադը և երեք տարի մնացին այնտեղ: Երեք տարի հետո կոտորեցին ամբողջ քաղաքը, թողին դատարկ և գնացին իրենց տեղերը: Այս բանը պատմեց եվդոկացի մի թուրք ուղտապան, որ փախել էր պատերազմից: Եվ ահա պատերազմ է, իսկ վերջը Աստված է իմանում:

ԳԼՈՒԽ ԾԶ
ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ[172] ՊԱՏՈՒՀԱՍԸ

Մինչդեռ մենք Զմյուռնիա քաղաքում էինք, 1131 (1682) թվի մայիս ամսի 7-ին օրվա երրորդ ժամին, արևելքի կողմից չափազանց

*...*եւ զընտանիս իւրեանց* վերականգնված է ըստ ռուսերեն հրատարակության, տե՛ս 202 էջ:

** Պուտան առանձին քաղաք է եղել և Պեշտի հետ միացել, կազմել է Հունգարիայի Բուդապեշտ քաղաքը:

շատ մորեխ եկավ, ինչպես կարկտախառն անձրև, ըստ Սողոմոնի առածի առանց թագավորի է մորեխը, բայց կարծես մեկից են հրաման ստանում*: Այնքան եկան, որ երկրի վրա ստվեր ընկավ, և արեգակի ճառագայթները արգելեցին, ցերեկը դարձավ գիշեր: Սարսափ ընկավ ամենի վրա, բոլոր արհեստավորները խափան մնացին, խանութների ու տների դռները փակեցին: Քաղաքում եղած թռչունները չկարողացան իրենց տեղերից շարժվել և լռեցին կրկչալուց:

Օրվա 5-րդ ժամից մինչև ժամը ութը եկան ու գնացին թափվեցին ծովը, իսկ ծովի ալիքները նետեցին դուրս: Նեխվեց նրանց գեշը և գարշելի հոտից քաղաքը (քաղաքացիք) տագնապի մեջ ընկավ, այդ պատճառով ավազը փորեցին և (գեշերը) լցրին փոսերը, ավազով ծածկեցին, հոտը կտրվեց: Օրեր հետո դարձյալ մորեխը եկավ, բայց ոչ այնպես, ինչպես առաջին անգամ, այլ քիչ, կես ժամի չափ:

Երեք տարի հետո լիկիացիների** երկրում սաստիկ սով ընկավ, մանավանդ Զմյուռնիա քաղաքում, քանզի ֆռանկները ծովային ճանապարհները փակեցին, ցորեն չմտավ Կոստանդնուպոլիս, թանկություն եղավ: Թագավորին հայտնեցին, թե ցորենը ցամաքային ճանապարհով է տարվում Զմյուռնիա: Ապա (թագավորը) հրաման տվեց և խիստ պատվեր, թե ցորենը որևէ այլ տեղ չպետք է տարվի, բացի Ստամբուլից: Այդ պատճառով սով ընկավ Զմյուռնիայում և ավելի խիստ սաստկացավ: Կերան բոլոր անուտելի կենդանիները: Երբ կենդանիները սպառվեցին, ձիերի թրիքը հավաքում, աղում ու հաց էին անում: Նաև ոսկոր էին հավաքում, կացնով մանրում էին, աղում և հաց էին անում: Քանի դեռ տաք էր, ուտվում էր, երբ հնանում էր, չէր ուտվում, մանրում էին, հետո էին ուտում: Նաև փտած ծառեր և ծառերի տերևները չորացնում էին, փշրում և ուտում, բայց այդ չէր օգնում, այլ ավելի վնասում էր ուտողներին: Շատ քրիստոնյաներ իրենց ուստերին ու դուստրերին էժան գնով վաճառում էին մահմեդականներին իրենց ապրեցնելու համար: Շատերը իրենց մանուկներին տանում գցում էին մահմեդականնե-

*Առակք Լ 27:

** Լիկիացիների երկիր ասելով պատմիչը նկատի ուներ Թուրքիան: